

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԷ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

**Գ. Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Ընդհանուր շուկայի շրջանակում «մրցակցային միջավայրի» կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մրցակցությունը շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության բաղկացուցիչ տարր է: Եվրոպական համագործակցությունն իր գոյության ընթացքում շոշափելի դրական արդյունքների է հասել եվրոպական ապրանքային շուկաներում մրցակցային իրավունքի ամրագրված նորմերի արդյունավետ կիրառման շնորհիվ:

Դրա հետ միասին հարկավոր է հաշվի առնել այն, որ մրցակցության պաշտպանությունը վերաբերում է տնտեսության մեջ պետական միջամտությանը: Վերջինիս արդյունավետության հարցը տասնամյակներ շարունակ բանավեճի առարկա է եղել տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչների միջև: Տնտեսության մեջ պետական միջամտությունը քննադատվում է հատկապես նոր դասականների կողմից (Կ.Վեկսել, Ի.Ֆիշեր, Ա.Պիգու և ուրիշներ): Խնդիրն այն է, որ հարկավոր է հնարավորինս նվազեցնել վերագային հակամենաշնորհային կարգավորման հետ կապված բացասական հետևանքները՝ ապահովելով ոչ միայն մրցակցության արդյունավետ պաշտպանությունը, այլև Եվրամիության և յուրաքանչյուր անդամ-երկրի ներդաշնակ զարգացումը:

Եվրամիությունում մրցակցության կարգավորման սկզբունքային բազմաթիվ նորմերի կիրառումն սկսվել է դեռևս 1951 թվականի ապրիլի 18-ին Փարիզում ստորագրված «Զարածխի և պողպատի եվրոպական միավորում հիմնադրելու մասին» պայմանագրում: Այդ պայմանագիրը կնքվել էր 50 տարով և նախատեսում էր համեմատաբար նեղ մասնագիտացված միջագային կազմակերպության ստեղծում, որի հիմնական գործունու-

թյունը Եվրոպայում քարածխի և պողպատի ընդհանուր շուկայի ձևավորումը և դրա գործունեության ապահովումն էր: Ըստ էության, Փարիզյան պայմանագիրը եվրոպական տնտեսական ինտեգրման գաղափարի գործնական իրացման առաջին փորձարկումն էր լինելու: Դրա շրջանակում ձևավորվեցին առաջին ինստիտուտները, որոնց հիման վրա փորձարկվեցին եվրոպական ինտեգրման հիմքում ընկած սկզբունքները: Պայմանագրի հոդվածների որոշ մասը նվիրված էր մրցակցության կարգավորման հարցերին: Օրինակ՝ 5-րդ գլուխը (հոդվածներ 60-64) նվիրված էր շուկայի մենաշնորհացմանը հանգեցնող գների ժամանակավոր կամ տեղային իջեցմանը, գնորդների նկատմամբ (հատկապես ազգային) խտրական պայմանների կիրառման արգելմանը: Պայմանագրի վեցերորդ գլխում (հոդվածներ 65-66) ամրագրված էին համաձայնությունների և տնտեսական համակենտրոնացումների կարգավորմանը վերաբերող, իսկ յոթերորդ գլխում՝ մրցակցային հարաբերություններին պետական միջամտությանն առնչվող դրույթներ [1]:

Եվրամիության ներկայիս մրցակցային քաղաքականության խնդիրները բխում են «Եվրոպական տնտեսական համագործակցություն ստեղծելու մասին» 1957 թվականի մարտի 25-ին Հռոմում ստորագրված պայմանագրի դրույթներից: Դրա հիմքում դրվեցին Փարիզյան պայմանագրի սկզբունքները: Եվրոպական տնտեսական համագործակցության, իսկ 1993 թվականի նոյեմբերի 1-ից՝ նաև Եվրամիության գործունեության նրպատակն է՝ ընդհանուր շուկայի ստեղծման և մասնակից երկրների տնտեսական քաղաքականությունների մերձեցման ուղիով նպաստել ամբողջ Համագործակցությունում տնտեսական գործունեության ներդաշնակ զարգացմանը (Հոդված 2) [2]: Ելնելով այդ նպատակից՝ Համագործակցության գործունեության կարևոր ուղղություններից մեկը դարձել է այնպիսի համակարգի ստեղծումը, որը «ընդհանուր շուկայում մրցակցությունը կպատնեշի աղավաղումներից» (Հոդված 3):

Պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրված է Համագործակցության խնդիրները լուծող ինստիտուցիոնալ կառուցվածքը (Եվ-

րուպական պառլամենտը, Խորհուրդը, Հանձնաժողովը և Գատարանը): Նույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսվում են վերոնշյալ ինստիտուտներին օժանդակող կառույցներ: Այսպես. Խորհրդին և Հանձնաժողովին օժանդակող կառույց է Տնտեսական և սոցիալական կոմիտեն, իսկ վերահսկողությունն իրականացնում է Աուդիտորների պալատը: Պայմանագրի 155-163 հոդվածները նվիրված են հանձնաժողովի ձևավորման, որոշումների ընդունման կարգին, ինչպես նաև իրավասություններին ու գործառույթներին:

Եվրոպական հանձնաժողովի ձևավորման երկու մոտեցում է գործել՝

1. Հանձնաժողովի անդամների թիվը դարձնել անդամ պետությունների թվին հավասար՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ.

2. Հանձնաժողովի անդամների թիվը սահմանել անդամ-երկրների թվից պակաս [3,168]:

Հանձնաժողովի ձևավորման սկզբնական շրջանում այն բաղկացած էր 13 անդամից (նվազագույնը պետք է լիներ 12, առավելագույնը՝ 24): Մասատրիխտի պայմանագիրը անդամների թիվը սահմանեց 17: Ավստրիայի, Ֆինլանդիայի ու Շվեդիայի անդամակցությունից հետո անդամների թիվը սահմանվեց 20 [3,195-196]: 1965 թվականից մինչև 2005 թվականը Հանձնաժողովը բաղկացած է եղել 20 անդամից, որոնք ընտրվել են անդամ երկրների կառավարությունների կողմից՝ 5 տարի ժամկետով\*:

Ներկայումս Եվրահանձնաժողովը բաղկացած է 27 կոմիսարներից (հանձնաժողովի անդամներից), որոնք անդամ երկրներից յուրաքանչյուրի կառավարության կողմից ընդհանուր համաձայնությամբ, 5 տարի ժամկետով նշանակված անձինք են: Կոմիսարներից յուրաքանչյուրը ղեկավարում է Հանձնաժողովի կազմում ստեղծված մեկ գլխավոր տնօրենություն (Ներկայումս մրցակցության գլխավոր տնօրենությունը ղեկավարում է Նիդեռլանդների ներկայացուցիչ Նելի Կրուսը.- Գ.Մ.):

---

\* Սկզբնական տարբերակում Հանձնաժողովի անդամները նշանակվում էին 4 տարի ժամկետով (Հոդված 158):

Կոմիսարներ կարող են նշանակվել միայն Եվրամիության անդամ երկրների քաղաքացիներ: Նրանք իրենց պարտականությունները կատարելիս անկախ են և գործում են համագործակցության ընդհանուր շահերից ելնելով: Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը կոդաբեցնեն ժամկետը լրանալու, մահվան դեպքում, սեփական դիմումի, ինչպես նաև Խորհրդի կամ Հանձնաժողովի միջնորդագրի հիման վրա՝ Եվրադատարանի վճռով (հոդվածներ 159-160): Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովն է սահմանում իր ընթացակարգային կանոնները: Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալները ընտրվում և նշանակվում են Հանձնաժողովի անդամներից:

Հանձնաժողովը կոլեգիալ մարմին է: Այն օժտված է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությամբ և միաժամանակ իրականացնում է գործադիր մարմնի գործառույթներ: Մասնավորապես, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնում է մրցակցության կարգավորման և պաշտպանության խնդիրներ լուծելիս:

Եվրամիության տարածքում մրցակցության պաշտպանությունը կարգավորվում է Հռոմի պայմանագրի 81-90-րդ հոդվածներով (նախկին 85-94 հոդվածներ): 81-րդ հոդվածը վերաբերում է հակամրցակցային համաձայնություններին: Ըստ այդ հոդվածի՝ հակամրցակցային են համարվում այն համաձայնությունները, որոնք ընդհանուր շուկայի տարածքում հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ խախտմանը: Մասնավորապես, այդպիսի համաձայնություններից են՝

- գնման կամ վաճառքի գների կամ առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի ամրագրումը,
- արտադրության, շուկաների, տեխնիկական զարգացման կամ կապիտալ ներդրումների սահմանափակումը կամ վերահսկումը,
- շուկաների կամ մատակարարման աղբյուրների բաժանումը,

- այլ առևտրային գործընկերների հետ հավասարաթեք գործարքների նկատմամբ ոչ միատեսակ պայմանների կիրառումը՝ դրանով նրանց դնելով ոչ շահավետ մրցակցային պայմանների մեջ,

- պարտադրում գործընկերներին այնպիսի լրացուցիչ պարտավորությունների, որոնք իրենց բնույթով կամ առևտրային պրակտիկային համապատասխանությամբ կապված չեն պայմանագրի առարկայի հետ:

Համաձայնության թվարկված տեսակները հակամրցակցային որակելու համար հարկավոր է պարզել մրցակցային միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունը: Իսկ դա պահանջում է մրցակցության բացասական ազդեցության չափանիշի ճշգրտում: Եվրամիության դատարանը որպես այդպիսի չափանիշ ընդունում է մրցակցության զգալի սահմանափակումը, ինչպես նաև երրորդ անձանց վրա զգալի ազդեցությունը: Եվրամիության դատարանը որպես զգալիության չափանիշ նշում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են մենաշնորհների ապրանքաշրջանառության ծավալը, այն ապրանքի բաժինը շուկայում, որի վերաբերյալ համաձայնություն է կայացվել, շուկայական այն կառուցվածքը, որի կազմում մենաշնորհ գործուներություն է իրականացվել [4, 70-71]:

Նշված հոդվածի երրորդ մասով բացառություններ են նախատեսված այն համաձայնությունների համար, որոնք նպաստում են ապրանքների արտադրության կամ տարածման բարելավմանը կամ աջակցում են տեխնիկական առաջընթացին:

Վերոհիշյալ դրույթներից ելնելով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

Նախ՝ Արևմտյան Եվրոպայի երկրների մրցակցության պաշտպանության օրենսդրությունները, որոնք հիմնականում ձևավորվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, միաժամանակ պետք է նպաստեին տվյալ երկրների՝ պատերազմից հետո քայքայված տնտեսության վերականգման խնդրի լուծմանը: Այդ է պատճառը, որ թույլատրելի համաձայնությունների ցանկը մեծ է: Դրանով է պայմանավորված նաև այն,

որ Եվրամիության մրցակցային օրենսդրությանն էլ հատուկ են բացառությունները:

Երկրորդ՝ Պայմանագրի 81-րդ հոդվածը չի տարբերակում համաձայնությունների տեսակները (հորիզոնական կամ ուղղահայաց): Կարգավորման առումով՝ թե՛ հորիզոնական և թե՛ ուղղահայաց համաձայնությունները Եվրամիությունում դիտարկվում են միևնույն հարթության վրա, մինչդեռ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, մրցակցության տեսանկյունից առավել վտանգավոր են հորիզոնական համաձայնությունները: Հետևաբար՝ տնտեսական համաձայնությունների կարգավորումը տարբերակված մոտեցում է պահանջում:

Երրորդ՝ Հռոմի պայմանագրով նախատեսված հակամրցակցային համաձայնությունը վերաբերում է Եվրամիության տարածքում գտնվող այն ձեռնարկություններին, որոնք պատկանում են տարբեր անդամ-երկրների: Միևնույն երկրի տարածքում գտնվող ձեռնարկությունների միջև եղած համաձայնությունները կարգավորվում են ոչ թե Եվրամիության օրենսդրությամբ, այլ տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ: Այն դեպքերում, երբ մի երկրին պատկանող ձեռնարկությունների միջև եղած համաձայնությունը կարող է ազդել Եվրամիության ուրիշ անդամ-երկրներում մրցակցության սահմանափակմանը, ապա այդպիսի համաձայնությունները ևս Եվրահանձնաժողովի կարգավորման տիրույթում է: Եվրահանձնաժողովը Եվրախորհրդի հետ հաստատած կանոնակարգով Եվրահանձնաժողովին համաձայնության մասին նախնական տեղեկացման (06.02.62 N 17/62) ստորին շեմ է սահմանել (տարեկան ընդհանուր ապրանքային շրջանառությունը չգերազանցի 200 մլն եվրոն, և Եվրամիության տարածքում դրանց համատեղ բաժինը չգերազանցի 5 տոկոսը):

Հռոմի պայմանագրով մրցակցության դաշտը կարգավորող երկրորդ ուղղությունը գերիշխող դիրքն է: Պայմանագրի 82-րդ հոդվածն արգելում է Եվրամիության ամբողջ տարածքում կամ դրա զգալի մասում գերիշխող դիրքի չարաշահումները, եթե դրանից կտուժի անդամ-պետությունների միջև կարգավորվող առևտուրը:

Մասնավորապես, այդպիսի չարաշահումներ են՝

- վաճառքի կամ գնման անարդար գների կամ առևտրի այլ անարդար պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

- հոգուտ սպառողների՝ արտադրության, շուկաների կամ տեխնիկական զարգացման սահմափակումը.

- ուրիշ առևտրային գործակալների հետ հավասարազոր գործարքների նկատմամբ ոչ միատեսակ պայմանների կիրառումը՝ դրանով իսկ նրանց դնելով մրցակցային ոչ շահավետ պայմանների մեջ.

- գործընկերներին լրացուցիչ՝ առևտրի պրակտիկային անհամապատասխան, պայմանագրի առարկայի հետ առընչություն չունեցող պարտավորությունների պարտադրումը:

Ի տարբերություն տնտեսական համաձայնությունները կարգավորող հոդվածի (Հոդված 81)՝ գերիշխող դիրքի կարգավորումը չի նախատեսում սահմանված կանոններից շեղումներ և բացառություններ: Բաց է մնում նաև գերիշխող դիրքի չափանիշների հարցը: Նման հարցադրումը կանոնակարգվում է դատական պրակտիկայով: Այսպես, «Յունայթիդ բրանդս» ընկերության գործի առթիվ Եվրամիության դատարանը գերիշխող դիրքը բնորոշել է որպես այնպիսի տնտեսական հզորության առկայություն, որը ձեռնարկությունն օգտագործում է արդյունավետ մրցակցության վերացման համար և որը ձեռնարկությանը հնարավորություն է տալիս իր գործերը վարելու մրցակիցներից և սպառողներից անկախ [5, 22]: Այդ մոտեցումից ելնելով ԵՄ դատարանը համարում է, որ սուբյեկտը գերիշխող դիրք չունի 40 տոկոսից ցածր մասնաբաժնի պարագայում:

Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածը շուկայում գերիշխող դիրքն արգելող դրույթներ չի պարունակում: Հետևաբար՝ ԵՄ մրցակցային օրենսդրությամբ արգելվում է ոչ թե գերիշխող դիրք ունենալը (անկախ դրա մեծությունից), այլ այդ դիրքի չարաշահումը:

Եվրամիությունում տնտեսական համակենտրոնացումները կարգավորվում են Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածի առաջին

մասով (միաձուլման այն դեպքի համար, որը կապված է դրա հետևանքով գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների չարաշահումների հետ): Իսկ 1987 թվականի նոյեմբերի 17-ից ԵՄ դատարանը 82-րդ հոդվածը կիրառեց ֆիրմաների կողմից այլ տնտեսվարողների կանոնադրական կապիտալում ունեցած բաժինների գնման նկատմամբ [6]: Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ հսկողության ընդհանուր կանոնները սահմանված են Եվրոպական խորհրդի 21.12.1989թ. N 4064/89 կանոնակարգով (1310/97 կանոնակարգով կատարված փոփոխություններ): Դրա համաձայն՝ համակենտրոնացում է համարվում՝

- երկու կամ ավելի անկախ ձեռնարկությունների միաձուլումը կամ միացումը,

- առնվազն մեկ ձեռնարկություն վերահսկող անձի կամ անձանց խմբի, մեկ կամ ավելի ձեռնարկությունների կողմից մեկ կամ ավելի ձեռնարկությունների ձեռք բերումը, ինչպես նաև դրանց որոշումների կայացման նկատմամբ պայմանագրով կամ այլ միջոցներով (ակտիվների կամ արժեթղթերի գնման) ուղղակի կամ անուղղակի հսկողության հաստատումը,

- համատեղ ձեռնարկության ստեղծումը :

ԵՄ Միաձուլումների կանոնակարգի առաջին հոդվածի համաձայն՝ տնտեսական համակենտրոնացումների հայտարարագրման շեմ է սահմանված\*.

1. Համակենտրոնացման բոլոր մասնակիցների տարեկան շրջանառությունների ամբողջական գումարը գերազանցում է 5 միլիարդ եվրոն:

2. Առնվազն երկու մասնակիցներից յուրաքանչյուրի տարեկան շրջանառությունը ԵՄ տարածքում գերազանցում է 250 մլն եվրոն, բացառությամբ այն դեպքի, երբ այդ մասնակիցների՝ ԵՄ տարածքում շրջանառության առնվազն 2/3-ը բաժին է ընկնում ԵՄ անդամ մեկ և միևնույն երկրին:

Ռուսաստանի ԳԱ Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի գիտաշխատող

---

\* Հայտարարագրման շեմը նշված Հոդվածում սահմանված էր էլքյուով: Հետագայում, ԵՄ դրամական միավորը շրջանառության մեջ դրվելուց հետո, այն փոխարինվեց եվրոյով:

Ե. Ուլիբիշևսկի կարծիքով՝ վերոհիշյալ շեմը բարձր է: Այդ պատճառով էլ Եվրահանձնաժողովի հսկողության տակ է ընկնում ԵՄ տարածքում միաձուլումների և միացումների 1/3-ը [7, 126]:

Համակենտրոնացման մասնակիցների տարեկան շրջանառության հաշվարկներում ներառվում են ոչ միայն տվյալ ընկերության, այլև նրա հետ կապված, այսինքն՝ իրեն վերահսկող և իր կողմից վերահսկվող ընկերությունների շրջանառությունները:

Կանոնակարգերով տարբերակված մոտեցում է սահմանված հորիզոնական և ուղղահայաց միաձուլումների նկատմամբ: Հորիզոնական միաձուլումների դեպքում դրանց համատեղ բաժինը ապրանքային շուկայում չպետք է գերազանցի 15%-ը, ուղղահայաց համակենտրոնացման դեպքում՝ 25%-ը:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից համակենտրոնացումների հայտարարագրման և Հանձնաժողովի կողմից դրանց քննարկման ընթացակարգը սահմանված է Խորհրդի 25.07.1990թ. N 2367/90 կանոնակարգով: Հետագայում՝ 2004-ից ի վեր, Եվրոպական խորհրդի ընդունած՝ «Ձեռնարկությունների միջև համակենտրոնացումների հսկողության» թիվ 139 կանոնակարգի և դրա կիրարկումն ապահովող թիվ 802 կանոնակարգի հիման վրա մրցակցության կարգավորման գործառույթը դրված է Եվրահանձնաժողովի Մրցակցության գլխավոր տնօրենության վրա: Վերջինիս իրավասության տակ է գտնվում ԵՄ տնտեսական տարածքում այն համակենտրոնացումների կարգավորումը, որոնցում մասնակից կողմերը ներկայացնում են ԵՄ տարբեր երկրներ: Գործող կարգի համաձայն՝ Մրցակցության գլխավոր տնօրենությունը կարող է իր իրավասության տակ գտնվող գործարքի հսկողությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել ԵՄ անդամ-երկրների համապատասխան մարմինների իրավասությանը: Բացի դրանից՝ համակենտրոնացումների մասնակիցներն իրենց հերթին կարող են հանդես գալ տվյալ գործարքի քննարկումը ԵՄ անդամ-երկրի մրցակցային մարմնի իրավասությանը կամ հակառակ ուղղությամբ փոխանցելու հայտով: Համակենտրոնացումները պատշաճ կարգով գնահատելու համար Եվրոպական հանձնաժողովն իրավասու է պահանջելու

անհրաժեշտ տեղեկատվություն, Եվրահամայնքի տարածքում ստուգումներ կատարելու, ինչպես նաև հետաքննություն անցկացնելու (հարցաքննելու օգտակար տեղեկություն ունեցող բոլոր անձանց և գրանցելու նրանց հայտարարությունները): Հանձնաժողովի կողմից լիազորված պաշտոնյաներն ստուգումն անցկացնելու համար ունեն հետևյալ լիազորությունները.

- մուտք գործել ձեռնարկության կամ ձեռնարկության ընկերակցության ցանկացած տարածք,

- ուսումնասիրել գործունեությանը վերաբերող մատյաններն ու այլ գրանցումները, անկախ այն բանից, թե ինչ կերպ են դրանք պահվում,

- վերցնել կամ որևէ կերպ ստանալ պատճեններ կամ քաղվածքներ այդ մատյաններից և գրանցումներից,

- ժամանակավոր կամ ստուգման համար անհրաժեշտ ժամանակով արգելքի տակ դնել համակենտրոնացմանը մասնակից տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը վերաբերող ցանկացած տարածք, մատյաններ կամ գրանցումներ,

- գործի առարկային վերաբերող փաստերի կամ փաստաթղթերի, ինչպես նաև քննության առարկայի խնդրով հարցաքննել ձեռնարկության կամ ձեռնարկության ընկերակցության անձնակազմի անդամի կամ ներկայացուցչի և գրանցել պատասխանները: Հանձնաժողովի պաշտոնյաները լիազորված են անհրաժեշտության դեպքում կապարակնալու ձեռնարկության գրասենյակը:

Մրցակցության կանոններով կարգավորվում են նաև Եվրամիության երկրների միջև դեմպինգի դրսևորումները: Պայմանագրի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է դեմպինգը դադարեցնելու վերաբերյալ հանձնարարականներ տալ այն կիրառող սուբյեկտին: Դեմպինգի շարունակվելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է տուժող անդամերկրին լիազորել պաշտպանվելու իր որոշած պայմաններով:

Մրցակցության կանոնների շրջանակում կարգավորվում է նաև Եվրամիության տարածքում պետական օժանդակությունը (հոդվածներ 88-90): Անդամ-երկրների կողմից դոտացիայի կամ

պետական ռեսուրսների հաշվին ցույց տրվող օժանդակության ցանկացած ձև, որը խախտում է կամ կխախտի մրցակցությունը՝ որոշ ձեռնարկությունների դնելով բարենպաստ վիճակի մեջ, կղիտվի անհամատեղելի ընդհանուր շուկայի հետ: Պայմանագրի 88-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված են պետական օժանդակության այն տեսակները, որոնք համատեղելի են ընդհանուր շուկայի հետ՝

- անհատ սպառողներին առանց խտրականության ցույց տրվող սոցիալական բնույթի օժանդակությունը,

- տարերային աղետների կամ որևէ արտակարգ պատահարի հետևանքով հասցված վնասի փոխհատուցման նպատակով ցուցաբերվող օժանդակությունը,

- Գերմանիայի Դաշնության որոշ շրջանների տնտեսություններին տրվող օժանդակությունը, որը կփոխհատուցի Գերմանիայի բաժանվածության հետևանքով առաջացած տնտեսական անշահավետությունը:

Նույն հոդվածի երրորդ մասում թվարկվում են այն օժանդակությունները, որոնք կարող են թույլատրելի համարվել, եթե Հանձնաժողովի կողմից քննարկվելուց և առաջարկ ներկայացվելուց հետո Խորհուրդը դրանց վերաբերյալ որակյալ մեծամասնությամբ դրական որոշում է կայացնում, այն է՝

- տնտեսապես հետամնաց կամ ոչ լրիվ զբաղվածություն ունեցող շրջանների տնտեսական զարգացման նպատակով ցուցաբերվող օժանդակությունը,

- համաեվրոպական նշանակություն ունեցող նախագծերին աջակցելու նպատակով տրվող օժանդակությունը,

- որոշակի տնտեսական գործունեության կամ որոշ տնտեսական շրջանների զարգացմանը նպաստելու նպատակով ցուցաբերվող օժանդակությունը, եթե այն չի ազդում ընդհանուր շահերին հակասող առևտրի պայմանների վրա:

Պայմանագրի 89-րդ հոդվածի 1-ին մասը հանձնաժողովին պարտավորեցնում է, համագործակցելով անդամ-պետությունների հետ, մշտապես վերահսկել և հետազոտել այդ պետություններում ցուցաբերվող օժանդակությունների բոլոր համակարգե-

րը: Հանձնաժողովի պահանջով որևէ ձևով պետական օժանդակություն ցուցաբերող անդամ երկիրը պարտավոր է Հանձնաժողովի նշած ժամկետում դադարեցնել կամ փոփոխել այդ օժանդակությունը: Հակառակ դեպքում՝ Հանձնաժողովը կարող է դիմել Եվրոպական դատարան:

Ինչպես նշվեց, պետական մարմինների հակամրցակցային գործողությունների Եվրոպական մրցակցային օրենսդրությունը զգուշավորություն է հանդես բերում զարգացման պետական կամ մունիցիպալ ծրագրերում որոշակի տնտեսվարող սուբյեկտներից ցուցաբերվելիք պետական այն օժանդակությունների նկատմամբ, որոնք անհավասար պայմանների մեջ կդնեն մրցակիցներին: Այս առումով՝ պետական օժանդակության ցուցաբերման օրենսդրական կարգավորող մեխանիզմներ ներդնելը հնարավորություն կտա խթանելու գերակա ճյուղերի և տարածքների տնտեսական զարգացումը, որը, վերջին հաշվով, կապահովի երկրի ամբողջ տնտեսության զարգացումը:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել Եվրոպական միության տարածքում վերագրային մեկ մարմնի կողմից մրցակցության պաշտպանության և կարգավորման գործառույթների հետևյալ ուղղությունները.

1) մրցակցությունը սահմանափակող համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների կանխարգելումն ու վերացումը.

2) համապատասխան շուկաներում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների չարաշահումների կանխարգելումը.

3) տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության սահմանումը և կարգավորումը.

4) մրցակցությունը սահմանափակող դեմպինգը կանխարգելող և վերացնող միջոցառումների իրականացումը.

5) մրցակցությունը սահմանափակող պետական օժանդակության կանխարգելումը:

Հռոմի պայմանագրի 81-րդ և 82-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ նոր մոտեցում ամրագրվեց 2004 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած N 1/2003 կանոնակարգով: Համաձայնու-

թյունների գրանցման և Եվրահանձնաժողովից թույլտվություն ստանալու ավելի քան 40 տարվա համակարգը փոխարինվեց «ձեռնարկություններին վստահություն» համակարգով: Ձեռնարկություններն իրենք են որոշելու՝ արդյոք այդ համաձայնությունը խախտում է Եվրոպական միության մրցակցային օրենսդրությունը, թե ոչ: Դրանով ձեռնարկություններին ազատում են բյուրոկրատական քաշքշուքից և մեծացնում դրանց պատասխանատվությունն օրենսդրության պահպանման առումով:

Եվրոպական հանձնաժողովն իրավասու է համաձայնությունները բացահայտելու նպատակով ապացույցներ գտնելու նպատակով անհրաժեշտության դեպքում խուզարկություն կատարելու ձեռնարկության գրասենյակում, ձեռնարկությանը չըպատկանող հողամասերում, տրանսպորտային միջոցներում: Մինչև 72 ժամ տևողությամբ, առանց դատարանի որոշման, կարող է փակել և կնքել այն աշխատասենյակները, որտեղ ֆինանսատնտեսական, հաշվապահական և այլ փաստաթղթեր են պահվում: Տվյալ ժամկետը երկարաձգելու համար հարկավոր կրլինի ստանալ դատարանի որոշումը: Եվրահանձնաժողովը Եվրամիության անդամ-երկրների հակամենաշնորհային մարմիններին կարող է հանձնարարել խուզարկություն կատարել Եվրոպական միության օրենսդրության խախտում թույլ տված երկրի ձեռնարկություններում: Այդ նպատակով ԵՄ անդամ-երկրների հակամենաշնորհային գերատեսչությունների ցանց է ստեղծվել [8]:

Եվրամիության մրցակցային օրենսդրության խախտման համար կիրառվում է պատժամիջոցի երկու տեսակ՝ տույժ և տուգանք: Պատժամիջոցների կիրառման հիմնական սկզբունքները շարադրված են N17/62 կանոնակարգի 15(2) հոդվածին համապատասխան, 1998 թվականին ընդունված՝ «Տուգանքների սահմանման դիրեկտիվներում [9]: Պատժի համար հիմք են ընդունվում խախտման վտանգավորությունը և տևողությունը:

Համաձայն N17 կանոնակարգի՝ մրցակցային օրենսդրության խախտումները երեք մակարդակի են դասակարգված՝ ոչ շատ լուրջ, լուրջ և շատ լուրջ: Դրանց համապատասխան էլ տու-

զանքի մեծությունն է: Ոչ շատ լուրջ խախտումների համար տուգանքը 1000-ից մեկ մլն եվրո է, լուրջ խախտումների համար՝ 1-ից 20 մլն եվրո, շատ լուրջ խախտումների համար՝ 20 մլն եվրո- յից ավելի, բայց ոչ ավելի, քան նախորդ տարվա շրջանառու- թյան 10 տոկոսը: Ոչ շատ լուրջ խախտումներից են առևտրի այն ուղղահայաց սահմանափակումները, որոնք ազդում են Եվ- րոպական միության տարածքի մի մասի վրա: Հորիզոնական և ուղղահայաց ամբողջական ազդեցությամբ խախտումները դաս- վում են լուրջ խախտումների շարքին: Իսկ գնային կարտելները և համաձայնության մասնակիցների միջև շուկաների բաժա- նումը դիտվում են որպես շատ լուրջ խախտումներ:

Յուրաքանչյուր խմբում, կախված խախտման տևողությու- նից, տարբերակում կա՝ մինչև մեկ տարի, մեկից մինչև 5 տարի (տուգանքի գումարն ավելանում է 50 տոկոսով), հինգ տարուց ավելի (յուրաքանչյուր տարվա համար տուգանքի գումարն ավե- լանում է ևս 10 տոկոսով):

Պատժամիջոցներ են նախատեսված տեղեկատվություն չը- տրամադրելու, ոչ հավաստի տեղեկատվության և տեղեկատվու- թյունը ուշացնելու համար՝ նախորդ տարվա շրջանառության մինչև 1 տոկոսի չափով: Տույժ է նախատեսվում հանձնաժողովի որոշումները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար նախորդ տարվա օրա- կան միջին շրջանառության 5 տոկոսի չափով:

Ինչպես տեսնում ենք, եթե տուգանքը մրցակցային օրենս- դրության խախտման համար է նախատեսված, ապա տույժը օրենսդրության անմիջական խախտման հետ կապված չէ. այն կիրառվում է Հանձնաժողովի որոշումները չկատարելու, ուշաց- նելու կամ ոչ պատշաճ կարգով կատարելու դեպքում: Դրա բուն նպատակը խախտումի հետ կապված գործի վարույթն իրա- կանացնելու համար անհրաժեշտ ծախսերը հոգալն է:

Հարկ է նշել, որ Եվրամիության մրցակցային օրենսդրու- թյան խախտման գործերի քննարկման մասին ընթացակարգը տուժած կողմին վնասի փոխհատուցում չի նախատեսում: Խախ- տում թույլ տված անձը տուգանքը վճարում է Եվրոպական

հանձնաժողովին: Եվրամիության մրցակցային օրենսդրությունը խախտած ձեռնարկությունների գործողություններից վնաս կրած անձինք այդ վնասը փոխհատուցելու համար կարող են դիմել իրենց ազգային դատարաններին: Օրինակ՝ Եվրահանձնաժողովը «Ֆուլցվագեն» ընկերությանը 102 մլն էքյուի չափով տուգանել է այն բանի համար, որ վերջինս Իտալիայում գտնվող իր միջնորդներին պարտավորեցրել էր մերժել ավտոմեքնաների վաճառքը մի շարք արտասահմանցի հաճախորդների [10, 391]: Նկատենք նաև, որ Հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել Եվրամիության դատարանում:

Այսպիսով՝ մրցակցության պաշտպանության և կարգավորման Եվրամիության փորձը (մասնավորապես՝ կարգավորող մարմնի ձևավորման և կազմավորման մեխանիզմները, դրա իրավասությունների շրջանակը, կարգավորման ուղղությունները) ուսանելի է, և դրա կիրառման նպատակահարմարությունն այլ տարածաշրջաններում (մասնավորապես՝ ԱՊՀ տարածքում) լրացուցիչ ուսումնասիրության և տեղայնացման կարիք ունի:

***Առանցքային հասկացություններ.** Եվրամիություն, Եվրահանձնաժողով, մրցակցություն, համակենտրոնացում, գերիշխող դիրք, շուկա:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Договор** об учреждении европейского объединения угля и стали/ В кн. Документы Европейского союза, т.1.- М.: “Право”, 1994, с.19-94.
2. **Договор** об учреждении европейского экономического сообщества / В кн. Документы Европейского союза, т.1, - М.: “Право”, 1994, с. 95-254.
3. **Ա. Գ. Ղազինյան**, Եվրոպական հանձնաժողով. իրավական կարգավիճակի հիմնահարցեր,-Եր., «Տիգրան Մեծ»,2003, 304 էջ:
4. **Рачков И. В.**, Ткачев А. А., Пустеленин П.В. Правовое регулирование конкуренции в Европейском Сообществе //Вестник МАП России, 2000.- N 2, с. 70-71.

5. **Еременко В. И.** Антимонопольное законодательство зарубежных стран.- М.: “Право”, 1997.

6. **Մ. Միքայելյան, Տ. Հովելյան, Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ուժեղացման անհրաժեշտությունը ՀՀ-ում/ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում/ Գիտաժողովի նյութեր, Եր., «Նահապետ», 2009, էջ 226-229:**

7. **Улымбышева Е.**, Антимонопольное регулирование в ЕС, Мировая экономика и международные отношения, 1994.- N 2, -126 с.

8. **Commission** Notice on cooperation within the Network of competition Authorities. Official journal, с 101, 27.04.2004, p. 43-53.

9. **Ivaldi M., Jullien B., Key P., Seabright P., Tirole J.** The Economics of tacit Collusion, IDEL, Report prepared for European Competition Commission, Toulouse, 2003.

10. **Конкурентное право Российской Федерации /** Под ред. Клейн Н.И., Фонаревой Н.Е.- М.: “Логос”, 1999.- 432 с.

**Г. М. МИКАЕЛЯН**

**ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ПРИМЕНЕНИЯ В  
ОБЩЕЭКОНОМИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ СНГ  
ОПЫТА ЕВРОСОЮЗА ПО УРЕГУЛИРОВАНИЮ  
ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ**

*Резюме*

В работе исследуется опыт Евросоюза (ЕС) по урегулированию экономической конкуренции в условиях современного регионального рынка, раскрываются некоторые особенности механизмов защиты национальных интересов и интересов Евросоюза в целом. Особый упор сделан на тех сторонах деятельности ЕС, которые могут применяться и в других регионах мира и, в частности, в общеэкономическом пространстве СНГ. Формирование общих правил урегулирования экономической конкуренции в рамках СНГ приобретает особую актуальность и

экономическую целесообразность для углубления интеграционных процессов стран Содружества.

**Ключевые понятия:** *Евросоюз, Еврокомиссия, конкуренция, концентрация, доминирующее положение, рынок.*

**G. M. MIKAYELYAN**

**APPROPRIATENESS OF APPLYING OF THE EU  
EXPERIENCE ON THE REGULATION OF ECONOMIC  
COMPETITION IN THE CIS MACROECONOMIC AREA**

*Summary*

The paper gives analysis of the European Union (EU) experience on regulation of the economic competition in terms of modern regional market, defines some characteristics of the mechanisms on protection of national interests and the EU interests in general. The activities implemented by the EU, which can be applied in other regions of the world, particularly in the CIS macroeconomic area, are particularly emphasized.

The formation of general rules for the regulation of the competition in the framework of the CIS gains currency and economic appropriateness to deepen the integration processes in CIS countries.

**Key concepts:** *European Union, European commission, competition, concentration, dominating position, market.*